ՀՏԴ 330(479.243)
Տնտեսագիտություն

Սեդա ԱՍՐՅԱՆ
Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տնտեսական հարցերով օգնական

ԱՀ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակ ունենալով բացահայտել Արցախի Հանրապետության տնտեսության առանցքային սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները՝ ներկայացվել է տնտեսության հիմնական ճյուղերին վերաբերող ցուցանիշներ: Ուսումնասիրության ընթացքում վեր են հանվել աղքատությանը վերաբերող հիմնահարցեր, որոնք կարիք ունեն արմատական հարցադրումների և համապատասխան ծրագրային մոտեցումների: «ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային հիմնախնդիրները» հոդվածում սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացվել են այլ երկրների համապատասխան ցուցանիշների համեմատությամբ: Արցախի Հանրապետության համար հաշվարկվել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում մշակված Մարդկային զարգացման ինդեքսը (HDI): Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ չնայած տնտեսական աճի դրական միտումներինն ընդհանուր առմամբ, համեմատաբար կայուն զարգացման տեմպերին, այնուամենայնիվ, թե՛ աղքատության հաղթահարման տեսանկյունից և թե՛ գործարարար միջավայրի բարենպաստ պայմանների ապհովման տեսանկյունից, անհրաժեշտություն կա մշակելու սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության նոր մոտեցումներ:

Բանալի բառեր՝ *սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, աղքատության մակարդակ, աղքատության հաղթահարում, տնտեսության ճյուղային կառուցվածք, մեկ շնչին ընկնող ՀՆԱ, մարդկային զարգացման ինդեքս, արտաքին տնտեսական հարաբերություններ, միջպետական հակամարտություն, օտարերկրյա ուղղակի ներդրումներ, բիզնես միջավայր:*

С. Асрян

КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

С целью выявления ключевых социально-экономических проблем экономики Республики Арцах были представлены показатели, связанные с основными отраслями экономики. В ходе исследования были затронуты проблемы бедности, которые требуют радикальных вопросов и соответствующих программных подходов. В статье «Ключевые вопросы социально-экономического развития Республики Арцах» были представлены социально-экономические показатели в сравнении с соответствующими показателями других стран. А также, для Республики Арцах был рассчитан Индекс человеческого развития (ИЧР), разработанный в рамках Программы развития ООН. Исследование показало, что, несмотря на положительные тенденции экономического роста и в целом относительно стабильные темпы роста, с точки зрения сокращения бедности и формирование благоприятной деловой среды, существует необходимость в разработке новых подходов к политике социально-экономического развития.

Ключевые слова: *социально-экономические проблемы, уровень бедности, рост бедности, экономическая структура экономики, ВВП на душу населения, индекс развития человеческого потенциала, внешнеэкономические связи, межгосударственный конфликт, прямые иностранные инвестиции, бизнес-среда.*

S. Asryan

KEY ISSUES OF THE SOCIO-ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARTSAKH

Aiming to identify key socio-economic issues of the Artsakh's economy, indicators related to the main sectors of economy were presented. During the study, poverty issues have been raised, which need radical questioning and relevant group approaches. In the article "Key issues of the socio-economic development of the Republic of Artsakh" the socio-economic indicators were presented in comparison with the corresponding indicators of other countries. Besides, the Human Development Index (HDI) developed within the UN Development Program was calculated for the Republic of Artsakh. The article states that despite the positive trends in economic growth and, generally, relatively stable growth rates, from the point of view of poverty reduction and formation of favorable business environment, there is a need to develop new approaches to socio-economic development policy.

Key words: *socio-economic issues, poverty level, poverty outgrowth, economic structure of the economy, GDP per capita, human development index, foreign economic relations, interstate conflict, foreign direct investment, business environment.*

Ցանկացած ազգային տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցերը բացահայտելու առումով կարևոր են պետական բյուջեի, ՀՆԱ-ի կառուցվածքի, շրջանների առանձին ճյուղերի զարգացման

մակարդակների, աղքատության մակարդակի, ՄԶԻ-ի, ներդրումների, արտաքին առևտրի և այլ հիմնահարցերի դիտարկումները:

Երկրի սոցիալ - տնտեսական պատկերը բնութագրելու նպատակով հատկանշական է պետական բյուջեի ուսումնասիրությունը, որը թույլ կտա հանգամանորեն դիտարկել երկրի կողմից իրականացվող ծախսային հոդվածները և բացահայտել սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

Գրաֆիկ 1. Պետական բյուջեի ծախսերը 2017-2018թթ. (մլրդ, դրամ)



Ինչպես տեսնում ենք, գրաֆիկ 1-ում 2017-2018 թթ. պետական բյուջեի կառուցվածքում գերակշռող մաս են կազմում սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը, ընդ որում, 2017 թվականին համախմբված բյուջեի ծախսերում սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը կազմում էր 47.3%, իսկ 2015-2016 թթ. այս ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 49.4% և 48.5%:

Պետական բյուջեի կարևորագույն ծախսային ուղղություններից են նաև կրթությունը, առողջապահությունը, տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված ծախսերը, որոնք կազմում են ՀՆԱ-ի համապատասխանաբար 5,4%-ը, 2,3%-ը, 5,2%-ը: Ինչ վերաբերում է պաշտպանության ոլորտին, ապա այն 2017-2018թթ. կազմում է 100 մլն դրամ կամ ՀՆԱ-ի 0,4%, որը բացատրվում է Արցախի Հանրապետության և

Հայաստանի Հանրապետության ընդհանուր ռազմական և պաշտպանական քաղաքականությամբ:

Բացի պետական բյուջեի ուսումնասիրությունից, երկրի տնտեսական վիճակի բնութագրման նպատակով կարևոր է տնտեսության ճյուղային կառուցվածքի ուսումնասիրությունը:

Գրաֆիկ 2. Տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռն ըստ շրջանների, 2017 թ.



Ինչպես տեսնում ենք, տնտեսության ճյուղերի տեսակարար կշիռները տարբերվում են ըստ շրջանների, ընդ որում Ստեփանակերտ քաղաքում կենտրոնացված է ծառայությունների ոլորտի ավելի քան 80%-ը, արդյունաբերության ոլորտի ավելի քան 50%-ը բաժին է ընկնում Մարտակերտի շրջանին: Գյուղատնտեսության ոլորտը չնչին տարբերությամբ է տեղաբաշված շրջանների միջև, մասնավորապես, 25%-ից ավելին բաժին է ընկնում Քաշաթաղի շրջանին, իսկ Ասկերանի և Մարտունու շրջաններում կենտրոնացված է գյուղատնտեսության համապատասխանաբար 22 %-ը, 18%-ը:

Ընդ որում տնտեսության տվյալ ճյուղերի գերակա դիրքերը նկատելի են նաև ՀՆԱ-ի կառուցվածքը դիտարկելիս, մասնավորապես, 2017թ. դրությամբ արդյունաբերությունը կազմում է ՀՆԱ-ի 35,8%-ը, գյուղատնտեսությունը՝ 28%-ը, շինարարությունը կազմում է 17,3%-ը: Այնուամենայնիվ տնտեսական աճի կոմպոնենտները դիտարկելիս տեսնում ենք, որ օրինակ 2017թ.-ին գրանցված տնտեսական աճի 16,4%-ից 11,7 %-ը ապահովվել է արդյունաբերական ոլորտը, իսկ գյուղատնտեսությունը տնտեսական աճին նպաստել է ընդամենը 0.9%-ով:

Ինչպես նշվեց վերևում, սոցիալական ոլորտը և սոցիալական աջակցությունը երկրի կարևորագույն ուղղություններից են, սակայն սոցիալական աջակցության ծրագրերին ուղղվող միջոցները բավարար չեն աղքատության մակարդակի զգալիորեն նվազման համար:

2017թ. դրությամբ աղքատության հաղթահարման համար ԱՀ-ին անհրաժեշտ է 3.3 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1,2%-ը կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների՝ ապահովելով բարձր հասցեականություն: Ծայրահեղ աղքատության վերացման համար անհրաժեշտ կլինի 0,8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3 %-ը՝ ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցությանը: Սակայն հաշվի առնելով միջազգային փորձը, իրականում աղքատության և ծայրահեղ աղքատության վերացման համար անհրաժեշտ կլինի կրկնակի անգամ շատ ավելի միջոցներ:

Եվ այսպես, 2017թ.-ի ընթացքում ԱՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 21.6%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակն ամբողջ բնակչության մեջ 2017թ. կազմել է 6.1%:

Աղյուսակ 1. ԱՀ. Աղքատության ցուցանիշներն ըստ բնակավայրերի, 2016-2017թթ[1]

		2016	2017
Աղքատ	Ընդամենը	23.3	21.6
	Քաղաքային բնակավայր	18.4	21.3
	Գյուղական բնակավայր	27.8	21.8
Ծայրահեղ աղքատ	Ընդամենը	6.2	6.1
	Քաղաքային բնակավայր	2.6	4.2
	Գյուղական բնակավայր	9.5	8
Ոչ աղքատ	Ընդամենը	76.7	78.4
	Քաղաքային բնակավայր	81.6	78.7
	Գյուղական բնակավայր	72.2	78.2

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից աղքատության մակարդակը էականորեն բարձր է հենց գյուղական բնակավայրերում, որտեղ բնակչությունը մեծապես զբաղված է գյուղատնտեսության ոլորտում:

[1] *Տե՛ս http://stat-nkr.am/files/publications/2018/Axqat_2017.pdf*

Հարկ է նշել, որ Արցախի Հանրապետության 7 շրջաններից 4-ում գերակշիռ ոլորտ է հանդիսանում գյուղատնտեսությունը, իսկ Մարտակերտում այն 2-րդ գերակա ճյուղն է արդյունաբերությունից հետո:

Բացի դրանից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր տնտեսության զարգացման համար գերակա ճյուղերից է համարվում գյուղատնտեսությունը և տարբեր ծրագրերի շրջանակներում խրախուսվում է գյուղական համայնքների զբաղվածությունն այս ոլորտում, ապա դժվար է դառնում լավատեսորեն տրամադրվել աղքատության վերացման հարցի շուրջ: Բանն այն է, որ ԱՀ-ում գյուղական վայրերի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոններից են ֆինանսական, արտադրական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը. այսինքն՝ ճանապարհների բացակայությունը, ոռոգման համակարգի ոչ բավարար մակարդակը, գյուղմթերքի մշակման, մթերման, պահպանման հնարավորությունների բացակայությունը, ֆինանսավորման հնարավորությունների սահմանափակ բնույթը և այլն:

Աղքատության մակարդակը բարձր է այն տնային տնտեսություններում, որոնք հողազուրկ են կամ ունեն շատ փոքր հողակտոր, ապահովված չեն անհրաժեշտ գյուղտեխնիկայով, չունեն հողի ոռոգման, ֆինանսական միջոցների ձեռք բերման հնարավորություն: Այսինքն՝ հողի առկայությունը, հողի սեփականությունը մեծ դեր է խաղում, սակայն բավարար չէ գյուղական վայրերում աղքատության մակարդակի կրճատման գործում: Ընդ որում, ամենացածր աղքատության մակարդակը 2017թ. գրանցվել է 0.5-1.0 հա հողակտոր ունեցողների մոտ[1]:

Աղյուսակ 2. ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսության ոլորտը գերակշռող Top-10 երկրները

	Country	% of GDP
1	Liberia	76.9
2	Somalia	60.2
3	Guinea-Bissau	55.8
4	Central African Republic	53.1
5	Chad	52.7
6	Comoros	51.6
7	Sierra Leone	51.5
8	Togo	46
9	Ethiopia	41
10	Niger	39

[1] *Տե՛ս http://stat-nkr.am/files/publications/2018/Axqat_2017.pdf*

Անդրադարձ կատարելով միջազգային փորձին՝ հարկ է նշել, որ աղքատության հաղթահարման նպատակով ապավինել միայն գյուղատնտեսության ոլորտի վրա, անարդյունավետ է: Կան երկրներ, ինչպիսիք են Լիբերիան, որտեղ գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 76.9%-ը, Սոմալիան՝ գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 60.2%-ը, Գուինեա Բիսաուն՝ գյուղատնտեսությունը կազմում է ՀՆԱ-ի 55.8 %-ը, որոնք տնտեսության գերակա ճյուղը դարձրել են գյուղատնտեսությունը և ապահովել բնակչության զբաղվածությունն այս ոլորտում՝ հանգեցնելով տնտեսության դիվերսիֆիկացման մոդելի բացակայությանը, ինչը և նկատելի է մեր երկրի տնտեսության մեջ:

Աղյուսակ 3. Ցածր եկամուտ ունեցող երկրների սոցիալական վիճակը բնութագրող տվյալներ

	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ -ն 2018 թ. կանխատեսում (ԱՄՆ դոլար)	Աղքատության մակարդակը 2017թ. դրությամբ
Լիբերիա	1396	54 %
Սոմալիա	499,8	73 %
Գուինեա Բիսաու	1948	69 %
Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն	706	62 %
Չադ	2421	45 % ,(2016 թ.)

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2, 3-ից, այս երկրները ցածր եկամուտ ունեցող երկրների շարքին են դասվում, որոնց մոտ արձանագրվել է աղքատության բարձր մակարդակ, ինչպես նաև 2018թ.-ի կանխատեսումներով նշված երկրներներում սպասվում են մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի բավականին ցածր ցուցանիշներ:

Գրաֆիկ3. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար), 2000-2018թթ.



Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 3-ից, 2000-2017թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Արցախի Հանրապետությունում 317$-ից աճել է մինչև 3845$, ինչն այնուամենայնիվ տնտեսության զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներին է բնորոշ: Ընդ որում Հայաստանն այդ ցուցանիշով 2017թ. 118-րդն է՝ զիջելով Ադրբեջանին՝ 109-րդ տեղ, Վրաստանին՝ 112-րդ տեղ:

Մեկ այլ միջազգային ցուցանիշով, սակայն, Արցախի Հանրապետությունը բավականին դրական միտումներով է հանդես գալիս: Եվ այսպես՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի շրջանակներում մշակված Մարդկային զարգացման ինդեքսը (HDI)[1] ԱՀ-ի համար կազմում է 0.814[2]՝ գերազանցելով նաև ՀՀ-ի 0.755 ցուցանիշը: ԱՀ-ի համար HDI-ի բարձր մակարդակը պայմանավորված է ինդեքսի մեջ ներառված կյանքի տևողության և տառաճանաչության ցուցանիշների բարձր մակարդակներով, իսկ 3-րդ կոմպոնենտը հենց մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշն է:

---

[1] *Տե՛ս http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi*

[2] *Տե՛ս Ցուցանիշը հաշվարկված է HDI-ի բանաձև հիման վրա:*

Այսինքն՝ HDI-ի բարձր մակարդակը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ Արցախի Հանրապետության մարդկային կապիտալը պետք է ուղղվի առավել արդյունավետ և եկամտաբեր ճյուղերի զարգացմանը, քան գյուղատնտեսությունն է:

Արցախի Հանրապետության հաջորդ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից է արտաքին տնտեսական հարաբերությունների սահմանափակ բնույթը:

Արտահանման և ներմուծման հիմնական ուղղությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը, ավելի քան 90.4%-ը, Ռուսաստանին բաժին է ընկնում արտահանման 1%-ը, ներմուծման 0.8%-ը, իսկ Միացյալ Թագավորությանը համապատասխանաբար 8.5%-ը, 6.8%-ը:

Ինչ վերաբերում է կապիտալի ներհոսքին, ապա վերջին ժամանակաշրջանում այն ուղղված է տասնչորս երկրների կողմից, մասնավորապես՝ ԱՄՆ, Ավստրալիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Իրանի Իսլամական Հանրապետություն, Լիբանան, Շվեյցարիա, Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Ֆրանսիա, Գերմանիա, Կանադա, Իսպանիա, Ուկրաինա, Նիդեռլանդներ:



Այնուամենայնիվ, նախորդ 5 տարիների ընթացքում նկատվում է օտարերկրյա ուղղակի ներդրումների կտրուկ անկում: Ինչպես տեսնում եք, 2013-2017 թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումները նվազել են 90.9 %-ով: Ընդ որում, այս ներդրումները հիմնականում կենտրոնացված են հանքագործական, սննդի վերամշակման արդյունաբերական ճյուղերում, ինչպես նաև կապի, հյուրանոցային ծառայությունների ոլորտներում:

Արտաքին տնտեսական հարաբերությունների նման պատկերը բացատրվում է նաև միջտարածաշրջանային խնդիրներով և դրանցից բխող

ռիսկերով: Այսպես, օրինակ 2018թ.-ին Համաշխարհային Տնտեսական Ֆորումի կողմից հրատարակված “Regional risks for doing business 2018” զեկույցում մասնավորապես, առանձնացվում են տարածաշրջանում բիզնես ծավալելու հետ կապված հիմնական ռիսկերը:

Ինչպես տեսնում ենք, հավելված 1-ում Կովկասյան տարածաշրջանում «Միջպետական հակամարտությունը» որպես բիզնես սկսելու ռիսկ առաջին եռյակի մեջ է ընդգրկված: Ընդ որում, Հայաստանի համար այն 2-րդ տեղում է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության գործընթացում Հայաստանի Հանրապետությունը չի հանդիսանում հակամարտող կողմ, սակայն մասնակցում է հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացին: Ընդ որում, Ադրբեջանի համար այն առաջնային ռիսկերից է համարվում և ըստ էության այդ ռիսկի առաջնային կրողներից է նաև Արցախի Հանրապետությունը:

Այսինքն՝ մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների առաջնահերթություններից ելնելով և հաշվի առնելով վերոնշյալ գործոնները՝ չափազանց կարևոր է վեր հանել տնտեսության այն ճյուղերը, որոնք մի կողմից՝ նվազագույնի կհասցնեն տվյալ ռիսկերը, իսկ մյուս կողմից ներդրումների ներգրավման տեսանկյունից կլինեն գրավիչ:

Հավելված

Հավելված 1. “Doing Business” 2018թ.-ի ռիսկերը ըստ ռեգիոնների[1]

	#1 Risk	#2 Risk	#3 Risk
Հայաստան	Մեծածավալ հարկադիր միգրացիա	**Միջպետական հակամարտություն**	Գործազրկություն
Ադրբեջան	Ֆինանսական ճգնաժամ, **Միջպետական հակամարտություն**	-	Բնական աղետներ
Վրաստան	**Միջպետական հակամարտություն**	Պետական կառավարման ձախողում	Գործազրկություն
Իրանի Հանրապետություն	Ջրային ռեսուրսների ճգնաժամ	Անկառավարելի ինֆլյացիա	**Միջպետական հակամարտություն**
Ռուսաստան	Ֆինանսական ճգնաժամ	**Միջպետական հակամարտություն**	Անկառավարելի ինֆլյացիա

[1] *Regional risks for doing business 2018, World Economic Forum, Insight report*

Գրականություն

1. A concise guide to maacro economics, David A.Moss. Harvard Buisness School
2. Macroeconomic issues today, Alternative approaches. Seventh edition, Robert B.Carson, Waden L.Thomas, Jason Hecht
3. Regional risks for doing business 2018, World Economic Forum, Insight report
4. www.stat-nkr.am
5. www.minfin-nkr.am
6. http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը: